



Խ Մ Բ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

«ՕՐՀՆԵՍՑԻ ՊԱՀՊԱՆԵՍՑԻ ԵՒ ՆԱԽԱԽՆԱՄԵԱԼ ՊԱՀԵՍՑԻ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԿՈՂՄՆ ԱԾԽԱՐՀԻՍ»

Լրացավ Հոկտեմբերյան հեղափոխության
միսնամյակը:

Հոկտեմբերի շնորհիվ վերածնված հայ ժողովուրդը երախտագիտությամբ ու հոգեկան անխառն ցնծությամբ նշում է սովետական եղբայրական ժողովուրդների և աշխարհի առաջադեմ համարն մարդկության հետ, արտոնական այդ հիշարժան տարեթիվը, որը նրան տվեց ոչ միայն ազգային, քաղաքական, մշակութային ու տնտեսական վերածնության հնարավորություն, այլև խաղաղություն, որից նա գուրկ էր մնացել հարյուրամյակներ շարունակ:

Այս համաժողովրդական բերկրալի տոնի առիթով, Մայր Աթոռ ս. Էջմիածինը ևս, իր հայրենասեր Հարապետի գլխավորությամբ, իր օրհնությունն ու ուրախությունն է բերում հայ ժողովրդի ցնծությանն ու ոգևորությանը:

Հոկտեմբերը վճռական դեր խաղաց Սովետական Միության ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի պատմական անկախագրի որոշման գործում:

Հայ ժողովուրդը 1920 թվականի նոյեմբերի 29-ին իր կանգն ու ապագան կապում էր Հոկտեմբերի պատմական իրադարձության: Մահվան եզրին հասած, անօգնական, դարերով տրորված, կրած ու ցամաքած մեր ժողովուրդը ոտքի էր կանգնում ռուս բարի և ազնիվ ժողովրդի եղբայրական օգնությամբ և արևի տակ նվաճում իրեն համար ազատ

ապրելու իրավունք, պետականություն և խաղաղություն՝ իր հայրենական հողի վրա:

Առաջին համաշխարհային պատերազմի համազգային ողբերգության տարիներին և այնուհետև 1920 թվականին, երբ թուրքական բանակները խուժել էին Արևելյան Հայաստան և ժողովրդին բնաջինջ անելու մտլուցքով տարված շարունակում էին ավերել ու կոտորածը, հասավ Հոկտեմբերի փրկարար ձեռքը, որը վճռեց ավերակների վրա նստած մայր Հայաստանի ու արևելահայության բախտը, գոյության հարցը:

Տեղի ունեցավ մեր պատմության մեծագույն հրաշքը, փրկությունը՝ մեր ժողովրդի: Փշրվեցան նոր եղեռն դարբնող մութ ուժերը:

Հաշատանում սովետական կարգերի հաստատումով ավարտվեց դարեր ու դարեր տևող մեր համազգային ողբերգությունը: Հայ ժողովուրդը նոր հաստատված կարգերի հաղթանակի մեջ գտավ իր նվիրական երազների մարմնացումը: Ավերակ երկիրը մեր կանգնեց ազգային վերածնության մեծ ճանապարհի վրա: Կյանքից, խաղաղությունից զրկված մեր ժողովուրդը անսահման հնարավորություններ ստացավ կառուցելու իր նոր կյանքը, կերտելու իր ապագան:

Խաղաղ քառույթներում թափառող մեր ժողովրդի համար ծագեց փրկության արևը:

Իսկ Մայր Աթոռ ս. Էջմիածինն էլ պառի ոգով ու հսրենասիրական ջերմ զգացմունքով

ողջունում էր ստեղծված կացությունը, գնահատում իրադարձությունների ընթացքը և առաջին իսկ օրերից, որպես հայրենասիրության օջախ, լինում էր իր ժողովրդի հետ, հայրենիքի հետ:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի վերջին շուրջ կետարյա պատմությունը անցել է Հայաստանում սովետական իշխանության հաստատման պայմաններում, հայրենի պետականության խաղաղ և ապահով հովանու ներքո:

Մայր Աթոռ ս. Էջմիածինը հայրենասիրական իր պարտքը կատարել է վերածնված հանոց հայրենիքի և հայ ժողովրդի հանդեպ պրոպագանդայի, պարտքի և պարտականության խորը գիտակցությամբ:

Հայց. առաք. եկեղեցին, Մայր Աթոռ ս. Էջմիածնի գլխավորությամբ, հավատարիմ իր կոչման ու պատմական առաքելության, կանգնեց վերածնված մայր հայրենիքի պաշտպանության դիրքերում, հանդես եկավ ազգային հայրենասիրության, միասնության, համերաշխության սրբապատկեր թարգմանելով, զոհողության ու ծառայության իր բաժինը բերավ հայոց ալիքալ հայրենիքի վերակառուցման և դժբախտ հայ ժողովրդի մնացորդացի վերածննդյան աշխատանքներին՝ հայրենի հարազատ պետության շուրջ համախմբելով տխուր ճակատագրի բերումով աշխարհում «գործն մոլորակվան աստեղաց» ցրված հայ ժողովրդի բնակիչներին:

Աս ողորդությամբ, այս ոգով, հայրենասիրական մեծ գործունեություն են ծավալել 1920—1967 թվականներին Գևորգ Ե, Խորեն Ա, Գևորգ Զ և Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետները, իրավագիտորեն հաստատելով, որ մեր երկիրն ու ժողովուրդը ազգային վերածնության փրկարար ու լուսավոր ուղի են բռնել՝ շնորհիվ Հայաստանում սովետական կարգերի հաստատման:

«Փրկվեցավ արևելահայությունը, — ասում է Վեհափառ Հայրապետը հիսնամյակի աթոռի գրած իր ողջույնի խոսքի մեջ, — հիմը դրվեցավ Հայաստանի Խորհրդային Հանրապետության: Եկան խաղաղության և ապահովության տարիներ, հայրենի վերաշինություն ու ազգային ազատ գարգացման տարիներ: Անցյալի աղետները և ողբերգությունները հեռավոր տխուր պատմություն են արևա: Հայաստանցին գիտակցությամբ իր ռազմադարյան հերոսական աստմության և իր մշակութային փառավոր արժեքներում, խորը օգնականությամբ իր ազգային արժանապատվության. ասուք իր հալացքը հառած է դեպի լուսաշող երկրան և դեպի ապագան»:

Հայ ժողովուրդը երբեք չի մոռանա 1915

թվականի ողբերգությունը և 1920 թվականի նոյեմբերյան իր վերածնունդը:

Այս երկու հակադիր թվականները իմաստնավորում են մեր ժամանակակից պատմությունը ու վերածնված մեր կյանքը, մեր ներկան ու ապագան, մին՝ իր ծանր, ողբերգական դրվագներով, մյուսը՝ իր հերոսականությամբ:

Սովետական կարգերի հաստատումով վերջ գտան Հայաստանում սովն ու արհավիրքը: Արարատի մայրավազքի ներքո մեր ժողովուրդը վառեց իր գոյության և հավերժության խարույկը:

Քառասունյոթ տարիների ընթացքում հայ ժողովուրդը անցել է խանդավառ որոնումների, սրտառույզ ոգորումների, ստեղծագործական լայն ընդգրկումների փառավոր ուղի, և ստեղծել է իր պատմության և ոգուն արժանի հոգևոր, մշակութային, նյութական նորանոր գանձեր, անսահման քարիքներ ներկա և գալոց սերունդների համար:

Ապրում և ստեղծագործում է հալ ժողովուրդը իր հայրենիքում, արևախամ ժայռերից կանք, լույս ու փառք քաղելով:

Երբեմնի ավերակների վրա նստած «Մայր Հայաստանը» վեր է խոսցել կանքի նոր ու սրտառույզ, հավերժական ձևերի մեջ առնական, վսեմ ու նվիրական:

Զարգանում է այդ նոր կյանքը, հայրենի խաղաղ ու ապահով պայմանների մեջ համաչափորեն ու բազմակողմանի կերպով դրսևորվելով հոգևոր, մշակութային ու արվեստի բազմապիսի ձևերի ու արժեքների մեջ:

Երբ նշում ենք Հոկտեմբերի հիսնամյակը, որի դրոշակի վրա գրվել էր՝ խաղաղություն, ազատություն, ազգերի ինքնորոշման իրավունք, հաց ու աշխատանք, — առաջին հերթին մտածում ենք մեր վերածնված ժողովրդի և հայրենիքի ապագայի. մեր ազգային իղձերի, երազների իրականացման մասին, հայ ժողովրդի իր մայր հողում՝ Սովետական Հայաստանում՝ Մայր Աթոռ ս. Էջմիածնի կենարար օրհնության ներքո համախմբվելով, ամբողջանալու մասին, աշխարհի խաղաղության և ժողովուրդների եղբայրության մասին:

Սովետական Հայաստանն է հայ ժողովրդի երազների, ազգային իղձերի միակ ու լուսավոր հանգրվանը, խաղաղ ու ապահով մայրահանգիստը, մեր Ավետյաց երկիրը, երաշխիքը մեր ապագա երազների, նվաճումների և գոյության:

Հիսնամյակի համաժողովրդական բերկրալի տոնի առիթով հայ ժողովուրդը անկեղծ հարգանքի, խորր երախտագիտության ջերմ ու սրտագին ողջույնի խոսք ունի իր ավագ

եղբոր՝ ռուս բարի և ազնիվ ժողովրդի նրկատմամբ:

Մեր պատմության և ազգային վերածնության այս խոստումնալից հորեղյանի բախտորոշ հանգրվանին, Մայր Աթոռ Ս. Էջմիածինը, հավատաշիւմ իր պատմական դերին ու սուսքելության, կշարունակի սրբությամբ ու պատվով կատարել իր պարտքը դեպի վերածնված իր ժողովուրդը և հայրենիքը:

Բոլոր երազներ են ծաղկում այսօր վերածնված հայ ժողովրդի սրտում:

Այսօր սրաձառ է մեր ժողովրդի ներկան, է՛լ ալելի հուսալից ու փառան՝ նրա ապա-

գան:

Թող օրհնվի «հյուսիսային կողմն աշխարհի»:

Թող օրհնվի հավետ, պահվի ու պահպանվի Նախախնամության աջով ու հայ ժողովրդի բազուկներով «Արևելեան կողմն աշխարհիս, Հայրապետութիւն և Հանրապետութիւն Հայոց»:

Փառք վերածնված մեր ժողովրդին:

Փառք մեր կյանքի ու ապագայի, մեր բոլոր նվաճումների հուսալի կովան՝ վերածնված մայր հայրենիքին՝ Սովետական Հայաստանին:

